ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/6515/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

16 օգոստոսի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Ագաստ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 18.03.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/8/3» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն մասին թիվ 277 ծանուցումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. օգոստոսի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 18.03.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/8/3» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն մասին թիվ 277 ծանուցումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. օգոստոսի 12-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. օգոստոսի 13-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ագաստ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 18.03.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/8/3» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծուման մասին թիվ 277 ծանուցումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Թիվ ԵԴ2/6515/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. սեպտեմբերի 20-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by
VARDANYAN GRIGORI

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am